



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2889

14342

419

ՀՀ Հ 3415
9779

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԹԻՍՏԱՄԱԳԻՉԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽԻԶԱՆՈՒ

14342

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՄԱՐՏ 1877

Վ. ԷՐԱՐԴՅԱՆԻ

1881 Մ Ա Ր Տ 1

ՎԱՀԱՐԱՅԻ

ԱԶԳ. ԿՐԵԱԿԱՆ ՏԵՍԱՆԻՐԵՐԵԿ



Կ. Պ Օ Ւ Խ

Ի ՏՊԱՐԱՆԻ Վ. Յ ՄԱՐԳԱՐԵԱՆ

1884

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽԻԶԱՆՈՒ

1734

ՆՊԱՏԱԿ

Հայաստանի մեջ ուսում տարածել
Խիզան գաւառն սկսելով

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. Ա. Ընկերութեանս կրնայ անդամակցիւ ամեն Հայ, մէկ բաժնի համար ամսական մի դահեկան արծաթ վճարելով։ Ուզողը կը բնայ մէկ բաժնէն աւելի գրուիլ։

Յօդ. Բ. Ընկեր եղող Տիկնայք և օտարազգիք նուիրատու անդամ կը համարուին։

Յօդ. Գ. Պատոյ անդամ կանուանին այն հայազգի և օտարազգի անձինք, որք միանդամ 5 էն մինչ 20 ոսկի կը վճարեն։

Յօդ. Դ. Ամեն ընկեր իւր բաժինը վճարած ատեն ընկերութեան կնքով և գանձապահի ստորագրութեամբ ընկալագիր մը կընդունի։

Յօդ. Ե. Հրաժարեալ կը համարուի այն ընկերը որ իւր բաժինները չվճարեր և Գործ.

Ժողովոյ ազգարարութիւնը ընդունելէ յետոյ
երեք ամիս ևս անփոյթ կը մնայ :

Յօդ. Զ. Ընկեր մը որ և է պատճառաւ երբ
ընկերութենէս հրաժարի, մինչև այն տաեն
իր վճարած գումարէն բան մը պահանջելու
իրաւունք չունի :

ԲԱՐԵԲԱՐՔ

Յօդ. Է. Բարերար կ'արձանագրուին ընկե-
րութեանս 20 ոսկիէ աւելի նուիրող կամ կը-
տակող անձինք : Կտակք կը գործ աղրուին
կտակարարոց կամաց համաձայն :

Յօդ. Ը. Բարերարաց անուանց ցանկն ընկե-
րութեան վարժարանաց և զբասենելին մէջ
կը դրուի ի տես : Նաև կալուածոց ճակատը
կը դրումուին կալուած նուիրող բարերարաց
անուանք :

ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱԿՈՒՆՔ ԱՆԴԱՄՈՅ

Յօդ. Թ. Ընկերը և պատույ անդամք իրենց
դիտողութիւններն և ընկերութեանս յառա-
ջադիմութեան վրայ ունեցած կարծիքները
կրնան հաղորդել Գործ. ժողովը գրաւոր կեր-
տիւ, որ ըստ պատշաճի ի նկատի կառնու և
այս մսաին տուած որոշումը իրենց կը հաղորդէ.
որ եթէ գոհ չինին, Երեսի. ժողովը կը դիմեն :

Յօդ. Ժ. Ընկերը և պատույ անդամք Երես.

ժողովը նիստերուն ներկայ գտնուելու իրա-
ւունք ունին իբր ունկնդիր :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. ԺԱ. Ընկերութիւնս երկու ժողովավ կը
կառավարուի . Երեսփոխանական և Գործա-
դիբ :

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. ԺԲ. Երեսփոխանական ժողովը կը բաղ-
կանայ կ. Պօլիս և այլուր բնակող ընկերաց
համեմատական քուէով ընտրեալ Երեսփոխան-
ներէն և կը գումարի կ. Պօլիս, որ ընկերու-
թեսնո կեդրոնատեղին է :

Յօդ. ԺԳ. Ընկերութեանս Երեսփոխանական
ժողովը կը բաղկանայ 50 անդամներէ որոց
25 ը Պօլիսն և մնացեալ 5 ը ճիւղերէն կընտ-
րուին :

Յօդ. ԺԴ. Երեսի. ժողովը դիւանը կը բաղ-
կանայ Ատենապետէ մը, Ատենապարէ մը և
սոցա մէկ մէկ փոխանորդ ներէն :

Յօդ. ԺԵ. Երեսի. ժողովը պաշտօնն է օրէ-
նըսդրական, ընտրական, համարառութեան
ելեմտական և դպրոցական ծրագրոց ըննու-
թեան և վաւերացման գործողութիւններն
կատարել, և տարեսյն վերջը հրատարակել իւր
և Գործ. ժողովը տեղեկագրերը :

Յօդ. ԺԶ. Երեսի. ժողովը կընտրէ մի Պրա-

մասլահ որ պէտք է ըլլայ նշանաւոր վաճառա-
կան մը կամ դրամատէր մը :

Յօդ. ԺԵ. Երեսփոխանաց թուոյն $\frac{1}{3}$ ը Ա.
տարին ամբողջութեան վրայ վիճակ ձգուելով,
Բ. տարին մնացեալ $\frac{2}{3}$ ին վրայ վիճակ ձգուե-
լով, իսկ Գ. տարին միւս երրորդ մասը ըստ
կարգի պիտի դադրին ի պաշտօնէ : Նոր ընտ-
րութեան մէջ դադարեալք վերընտրելի են :

ԳՈՐԾԱԴԻԲ ԺՈՂՈՎ

Յօդ. ԺԵ. Ընկերութեանս գործերը 5 ան-
դամէ բաղկացեալ Գործ. ժողովյ մը յանձ-
նուած է հաւաքարար պատասխանատու առ
Երեսփ. ժողովն :

Յօդ. ԺԹ. Գործ. ժողովն Ընկերութեան վա-
րիչ մարմինն է, նա կը դործագրէ Երեսփ.
ժողովյ տուած որոշումները, կը հաւաքէ բա-
ժինները, կը դանձէ նուէրները, Ընկերու-
թեան դանձն աճեցնելու միջոցներն ի գործ
կը դնէ, արտօնեսու վարկը ճշդիւ կը գործա-
ծէ Ընկերութեան նպատակին, դպրոցները կը
բանայ և նոցա կանոնաւոր ընթացից հոդ կը
տանի . կը հսկէ Ընկերութեան գոյից և ընդ-
հանրապէս նորա նիւթական և բարոյական
շահուց :

Յօդ. Խ. Երեսփ. ժողովը պիտի ընտրէ
Գործ. ժողովյ Ատենապետ մը, ընտրեալ

Ատենապետը իւր պաշտօնակիցները ընտրելէ
յետոյ իւրաքանչիւրին պաշտօնարաշխութիւն-
ներն ինքն կընէ, որոց անունները և պաշ-
տօնները կը հազորդէ Երեսփ. ժողովին առ ի
գիտութիւն : Ատենապետը ժողովյ անդամ-
ները չէ կարող հրաժարեցունել :

Յօդ. ԽԱ. Գործ. ժողովյ անդամներէն որ
և իցէ պատճառաւ եթէ հրաժարող մ'ըլլայ ,
յաջորդը ժողովյ կողմանէ կը նշանակուի , և
Խ ԵՇ յօդուածոյն համեմատ Երեսփ. ժողովյ
կը հազորդուի առ ի զիտութիւն : Իսկ երբ ան-
դամոց մեծամասնութիւնը կամ Ատենապետը
հրաժարի, նոր ընտրութիւնն կըլլայ ըստ Ի.
յօդուածոյ :

Յօդ. ԽԲ. Գործ. ժողովը վեց ամիսն մի ան-
գամ իւր գործառնութեանց համարը , ելե-
մոից հաշուեկիուը և տարին մի անդամ յա-
ջորդ տարւոյն ելևմտացոյցը և բռնելիք ըն-
թացքը Երեսփ. ժողովյ ներկայացունելու
պարտաւոր է :

Յօդ. ԽԳ. Գործ. ժողովը Ընկերութեան հա-
սութից առ առաւելն $\frac{0}{0} 80$ ին վրայ կրնայ
վարկ պահանջել, իսկ մնացեալ $\frac{0}{0} 20$ ը միշտ
իրը պահեստի գրամ Դրամապահին քոլ պիտի
կենայ :

Յօդ. ԽԴ. ԵՄԷ Գործ. ժողովն ելևմտացոյցին
մէջ նշանակեալ գումարէն աւելի ծափք ընե-

լու հարկը զգայ, պէտք է որ Երեսի, ժողովն նոր վարկ մը պահանջէ :

Յօդ. ԻԵ. Գործ. ժողովը կրնայ Ընկերութեան նպատակին ծառայող նոր ձեռնարկութիւններ ընել իւր պատասխանատուութեան տակ :

Յօդ. ԻԶ. Գործ. ժողովը անդամք կրնան թէ Երեսիսանութենէ և թէ ընդհանուր անդամակիցներէ ընտրուիլ :

Յօդ. ԻԵ. Գործ. ժողովը երեք տարի պաշտօն կը վարէ և վերընտրելի է ըստ Ի. յօդածոյ :

ՃիՒՂ

Յօդ. ԻԲ. Մայրաբաղսէս դուրս դաւառի մը ընկերաց թիւն երբ առ նուազն 75ի հասնի Ընկերութեանս ճիւղ կը համարուի : Եւ 5 մեծագոյն ճիւղեր մէկմէկ Երեսի, ընտրելու իւրաւունք ունին, իսկ երբ թուոց հաւասարութիւն պատաշի վիճակաւ կորոշուի :

Յօդ. ԻԹ. Ճիւղերը կը կառավարուին երկու ժողովով. Ընդհանուր և Գործադիր : իսկ եթէ անդամոց թիւը 150ի հասնի, Ընդհանուրը Երեսի. ժողովոյ կը վերածի :

Յօդ. Լ. Ընդհ. ժողովը կը բաղկանայ ընկերներէ և կը գումարուի ճիշդ ընկերութեան ներքին կանոնադրին համաձայն :

Յօդ. ԼԱ. Ընդհ. ժողովը պաշտօնն է ընտ-

րել մի Գործ. ժողով որոյ համարատուութիւնը և հաշուեցուցակը քննելով և վաւերացնելով կը յղէ Կ. Պօլսոյ Գործ. ժողովոյն :

Յօդ. ԼԲ. Գործ. ժողովը ներկայացուցչաց տուած հրահանգները և ի նոցանէ եկած առաջարկութիւնը իւր դիտողութեամբ կը ներկայէ ճիւղի Ընդհ. և կամ Կ. Պօլսոյ Գործ. ժողովոյն :

Յօդ. ԼԳ. Գործ. ժողովը երեք անդամէ կը բաղկանայ, և պաշտօնն է ճիւղին վերաբերեալ վարչական գործերը կատարել, ընկերաց թիւը աւելցնելու համար միջոցներ խորհիլ և գործադրել, և Կ. Պօլսոյ Գործ. ժողովոյն հետ թղթակցիլ գէթ ամիսն մի անգամ :

Յօդ. ԼԴ. Գործ. ժողովը իւր գործառնութեանց տեղեկագիրը և հաշուեցոյցը վեց ամիսն մի անդամ Ընդհ. ժողովոյ տալու պարտաւոր է :

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՅՔԻ ԶԲ

Յօդ. ԼԵ. Քաղաքի կամ գիւղի մէջ գտնուող Ընկերք երբ ճիւղ կազմելու որոշեալ թիւը չունին, ներկայացուցիչ մը կընտրեն իրենց մէջէն և կամ Գործ. ժողովը մէկը կը ներկայացնէ իրենց, որոյ պարագն է ընկերաց բաժինները հաւաքել և առաջարկը յլել զինքը վաւերացնող Գործ. ժողովոյն, որմէ կընդունի նաև իւր հրահանգները :

Յօդ. Աջ. Ներկայացուցիչք պարտին իրենց
հաւաքաց նու էրները և բաժնեղները յշե
գործ, ժողովց երեք ամիսը մի անդամ:

ՎերԱԲՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆ

Յօդ. Ալ. Հիմական կանոնագիրս վերաքըն-
նելի է երեք տարի վերջը, սակայն մինչ ի վա-
երացում՝ նախորդն անվրէպ գործադրելի է:

Յօդ. Ալ. Ընկերութիւնն այն ատեն լուծեալ
կը նկատուի, երբ իւր անդամոց թիւը իւր
երկու Վարչական-ժողովոց թիւէն պահաս
կինի:

Յօդ. Աթ. Երբ ընկերութիւնն լուծուի, նորա
ստացուածքն իւր նպատակին գործածելու պայ-
մանաւ՝ Ազգային կեղրոնական Վարչութեան
Կրթական-Տեսչութեան անօրէնութեան կը
յանձնուի :



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

ԽԻԶԱՆՈՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ԲԱՑՈՒՄՆ ԺՈՂՈՎՈՑ ՎԱԿԵՐԱՑՈՒՄՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՓԱԿՈՒՄՆ

Յօդ. 1. Գործ. ժողովց Ատենապետը Սեպ-
տեմբեր ամսոյ մէջ Երեսփ. ժողովը կը բանայ
նախանթաց տարւոյն ընկերութեան գործոցը
վրայ ընդհանուր տեսութիւն մը ընելով, և
կը ներկայէ ժողովոց նոր շրջանին մէջ ընկե-
րութեան յառաջադիմութեան մասին ձեռք
առնուելիք միջոցները :

Յօդ. 2. Գործ. ժողովց Ատենապետը ընդ-
հանուր տեսութիւնն ընելէ վերջը, կը հրա-
ւիրէ Երեսփոխանները առժամանակեայ Ատե-
նապետի և ատենագլուխի մը ընտրութեան,
եթէ վիճակաւ դադրած են :

Յօդ. 3. Ընտրութիւններէն անմիջապէս վեր-
ջը նորընտիր Երեսփոխանաց յանձնառութեան
գրերը, և ընտրութեան տեղեկագիրը կը կար-
դացուի, և դիւանի ընտրութիւնը կը կատար-
ուի, առժամանակեայ դիւանի պատրաստած
ցանկի վրայէ :

Յօդ. 4. Երեսփ. ժողովը քանի որ օրակարգ ունի կը շարունակէ իւր նիստերը : Խոկ արտաքրյա նիստը դիւնի որոշմամբ կամ Գործ ժողովոյ և կամ տասերկու Երեսփոխանաց առաջարկութեամբը կը դումարի :

Յօդ. 5. Երեսփ. ժողովը ընտրողական-ժողովյ կողմութենէն վերջը , հիմնական կանոնադրի ԺԵ. յօդուածոյն համեմատ վիճակ կը ձգէ Երեսփոխանաց թույն վրայ :

Յօդ. 6. Երեսփ. ժողովը Մայիսի մէջ կը փակուի , յորում դադարելի Երեսփոխանաց պաշտօնն լրանալով նոր ընտրութիւնը կըսկին որ մինչև Սեպտեմբեր կ'աւարտի ընդհակողութեամբ Ընտրողական ժողովոյ :

ՊԱՇՏՈՆ ԴԻՒԱՆԻ ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՈՑ

Յօդ. 7. Ատենապետից պաշտօնն է բանալ և փակել զատեանն , կանոնադրի և Երեսփ. ժողովյ զործառնութեանց հսկել , վիճարանութեանց և քուէարկութեանց օրինաւորութիւնն ապահովել : Ատենապետք պարտին միմեանց յաջորդել եթէ մին կամ միւսը՝ վիճարանութեան մասնակցիլ ուզէ :

Յօդ. 8. Առաջին Ատենադպրին պաշտօնն է օրակարգը կարդադրել և ժողովյ ատենադրութիւնները պատրաստել և թեր ու դէմիսիլ ուզող Երեսփոխանաց անուտնքը նշա-

նակել : Ա. Ատենադպրին բացակայութեան ատեն՝ Բ. ը կը վարէ ոյն պաշտօնը :

Յօդ. 9. Դիւնին պարտաւորութիւնն է ժողովը գումարել և ընտրութեանց ցանկերը պատրաստել (խոկ ընտրողը ազատ են ցանկէն դուրս անձանց քուէ տալ :)

Յօդ. 10. Դիւնին ժողովոյ Ատենադրութեան տեսարին մէջ ստորագրել կուտայ Երեսփոխանաց՝ իրենց ներկայութիւնն :

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԻՔ

Յօդ. 11. Ատեանը կը բացուի անդամոց իսկական մեծամասնութեամբը , որ ժողովը նիստերուն օրինաւորութեան պայմանն է :

Խակական մեծամասնութիւնն է Երեսփոխանաց $\frac{1}{5}$ րու մասն անպատրաստ համարիլ որ և է պատճառներով մնացեալին կէսէն մէկ աւելին որ է 15 :

Յօդ. 12. Երեսփ. ժողովը կրնայ նաև որ և է թուով նիստ կազմել բայց այն ատեն 7 ուրող ձայնից միութիւնը գտնել հարկ է :

Յօդ. 13. Ատեանը բացուելէ յետոյ , նախորդ նստի ատենադրութիւնը ընդունելութեան կը դրուի որ պէտք է ստորագրեալ լինի նոյն նստին մէջ պաշտօն վարող դիւնին կողմէն՝ Գիտողութիւնը միայն անոր անձիշդ Երեցած կէտերուն վրայ կը լինին :

Յօդ. 14. Ատենագրութեան ընդունելութե-
նէն յետոյ , Ատենապետը՝ դիւանին ուղղեալ
գրութիւնները ժողովոյ կը հաղորդէ որոց հա-
մար եթէ ստիպողութիւն չի տրուի , առ ա-
ռաւեն կէս ժամ կը զոհուի և կանցնի օրա-
կարգին , մնացած զործողութիւնք յաջորդ
նստին թողով :

Յօդ. 15. Վիճաբանութեանց մէջ Ատենա-
բանք փոխագարձ կարգաւ կը խօսին , թեր
ու դէմ . որ և է ընդմիջում և բեմական լեզ-
ուի անվայել բառ արդիկեալ է :

Յօդ. 16. Եթէ ժողովը աղմկայոյգ լինի , Ա-
տենապետը նիստը կը դադրեցնէ տասը վար-
կեան , մինչև որ ժողովը իր բարեկարգու-
թիւնը գտնէ . իսկ երբ կրկին պատահի ժո-
ղովը կը փակէ , խնդրոյն շարունակութիւնը
յաջորդ նստին թողով :

ԳՈՒԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵԽ ՈՐՈՇՈՒՄ

Յօդ. 17. Ժողովը առժամայն կրնայ յուղել
որ և է խնդիր , բայց եթէ խնդրոյ մը վրայ
ժողովոյ մէջ համաձայնութիւն չի գոյանայ և
կամ եղած առաջարկութիւն մը աւելի լուրջ ե-
ղանակաւ իմաստափել և լուսաբանել ուղէ ,
մասնաժողով մը ընտրելով , պայմանաժամաւ
մը խնդիրը նմա կը յանձնէ :

Յօդ. 18. Վիճաբանութիւնը աւարտեալ է

երբ խօսից կարգը սպասոի , սակայն երբ վի-
ճաբանութեան ընթացքին մէջ շատ մը ձայներ
քուէ պահանջեն , Ատենապետը մնացեալ Ա-
տենաբանից անունները յիշեցնելով ժողովոյ
կամքը կը հարցնէ , ժողովը կը պատասխանէ
ձեռամբարձով առանց վէճի :

Յօդ. 19. Ատենապետը վիճաբանութեան
փակում արտասանելէ յետոյ , թեր ու դէմ
եղած առաջարկները ժողովոյն կը ներկայէ և
բարեփոխեալ առաջարկներէ սկսելով կարգաւ
քուէի կը դնէ :

Յօդ. 20. Ժողովը իւր որոշումները յայտնի
քուէով , իսկ ընտրութիւնները դադո՞նի քուէով
կը կատարէ : Յայտնի քուէն ձեռամբարձով կը
կատարուի , իսկ երբ շփոթութիւն պատահի
ել ու նիստավ կը կրկնուի :

Գաղտնի քուէարկութիւն կը լինի հետեւեալ
կերպիւ : Ատենապետը երկու քննիչ կը կարգէ
որք դիւանին կը ներկայանան , և Ատենա-
պետը իւրաքանչիւր երեսփոխանի քուէթուլթ
մը կը բաժնէ և 10 վայրկեանէ եաքը ներկայ
երեսփոխանները մի առ մի կը հրաւիրուին ի-
րենց քուէն տուփը ձգելու , ուրկէ վերջը քուէ-
համարը կը կատարուի քննչաց հսկողութեան
ներքեւ ու արդիւնքը Ատենապետը ժողովոյ կը
հաղորդէ : — Գաղտնի քուէարկութիւնը կը

կատարուի նաև այն ատեն երբ 5 Երեսփոխանք պահանջեն :

Յօդ. 21. Քուէից հաւասարութիւն պատահած ատեն, Ատենապետը կրկին քուէ կուտայիսկ եթէ չուզի տալ, վիճաբանութիւնը կը շարունակուի :

Յօդ. 22. Ընտրութեանց մէջ երբ քուէից հաւասարութիւն պատահի, վիճակաւ կորոշուի:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 23. Երեսփ. ժողովոյ որոշումները դիւնին կողմէն գրաւոր կերպիւ կը հաղորդուին Գործ. ժողովոյ առ ի գործադրութիւն :

Յօդ. 24. Գործ. ժողովոյ իւրաքանչիւր անդամ՝ ինքը կը պատասխանէ իրեն վերաբերեալ հարցմանց, որ ժողովին մէջ միայն ձայն ունին եթէ Երեսփոխան չեն :

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յօդ. 25. Երեսփ. ժողովոյ նիստերէն որ և է պատճառաւ բացակայ գտնուող անդամք իրենց քուէները և օրակարգի նկատմամբ ունեցած դիտողութիւններնին կրնան նամակաւ յղել դիւնն :

Յօդ. 26. Երբ Երեսփոխան մը որ և է պատճառաւ բացակայ գտնուի ժողովին, պարտի դիւնին հաղորդելիւր բացակայութիւնը դրաւոր կերպիւ :

Յօդ. 27. Երկու յաջորդ նիստերէ բացակայ Երեսփոխան մը երբ իր բացակայութեան պատճառը գրաւոր չի հաղորդէր դիւննին, երբորդին ազգաբարութիւն մը կընդունի և երբ անձամբ կամ գրաւոր չի պատասխանէ, հրաժարեալ կը համարուի և բողոքելու չունի իրաւունք :

Յօդ. 28. Բայց դադարեալ Երեսփ. ընտրութենէն (տես հիմն. կանոնագրի յօդ. 17) որ և է պատճառաւ հրաժարեալ Երեսփոխանաց յաջորդները ժողովոյ կողմէն կընտրուին :


ՊԱՏԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Յօդ. 29. Եթէ ժողովոյ անդամներէն մին առանց Ատենապետէն խօսք ուղելու՝ խօսի, ընդմիջէ կամ անարդէ և կամ ժողովոյ օրինաւորութիւնը խանդարէ, Ա. անդամ ի կարգ կը կոչուի, Բ. անդամ խօսելէ կը դադրի, իսկ Եթէ սոյն վարմունքը մի քանի նիստերու մէջ շարունակէ . ժողովոյ որոշմամբ Երեսփոխանութենէ կը դադրի :

ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 30. Սոյն ներքին կանոնագիրը վերաբնութեան կենթարկուի 3 տարիէն յետոյ. սակայն ամենահորկաւոր պարագայից մէջ Երեսփ. ժողովը կրնայ բարեվոխել զայն :





529

Ընկերութեան վերաբերեալ ամեն
նամակ եւ այլ գրադիմք պէտք է ուղ-
ղել նետենալ նասցեին :

« Կ. Պօլիս Մերձան-Փաղոց Գատը-
Գումբու խան ըիս և գրասենեակ Ռո-
սումբահրաց-Քնկ. Խիզանու » :

استانبولده مرجان چارشونده قاضي قوسرو
خانده نومرو ۱ خيدانك (اوسمناسيراس)
عابرور شركته

Société Oussoumnassiratz de Hizan
Rue Merdjan, Kadi Koumrou Han N. 1
Constantnople

